## Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանի շնորհավորական ուղերձը տեղական ինքնակառավարման օրվա առթիվ

10.11.2025

Սիրելի՛ համայնքների ղեկավարներ, տեղական ինքնակառավարման համակարգի աշխատակիցներ, ավագանու անդամներ,
Սրտանց շնորհավորում եմ ձեզ Տեղական ինքնակառավարման օրվա առթիվ:
Այս օրը կոչված է ընդգծելու մեր համայնքների ինքնուրույնության, ժողովրդավարական կառավարման և բնակիչների մասնակցությամբ կառավարման կարևորությունը: Տեղական ինքնակառավարումը մեր երկրի պետական համակարգի հիմնասյուներից է, որտեղ յուրաքանչյուր որոշում ուղղակիորեն անդրադառնում է մարդկանց կյանքի որակի վրա:
Գեղարքունիքի մարզում մենք մշտապես կարևորել ենք համայնքների համաչափ զարգացումը, ենթակառուցվածքների բարելավումը, սոցիալ–տնտեսական առաջընթացը և բնակիչների բարեկեցությունը: Այս ուղղությամբ ձեր՝ համայնքապետերի, ավագանիների և տեղական ինքնակառավարման մարմինների աշխատակիցների հետևողական աշխատանքը մեծապես նպաստում է մեր մարզի կայուն զարգացմանը:
Համոզված եմ, որ միասնական ջանքերով շարունակելու ենք կառուցել ուժեղ, կայուն և զարգացող համայնքներ՝ հենվելով թափանցիկության, հաշվետվողականության և հանրային վստահության սկզբունքների վրա:
Թող այս օրը նոր խթան դառնա բոլորիս համար՝ ավելի արդյունավետ ծառայելու մեր համայնքներին և պետությանը:
Շնորհակալություն եմ հայտնում ձեր նվիրված աշխատանքի, ազնիվ ծառայության և մեր մարզի զարգացման գործում ներդրած ջանքի համար: